ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ 2012-2013ԹԹ.[1]

Կարեն Վերանյան[*]

Բանալի բառեր՝ ՀՀ գործընկեր երկրներ, ապրանքախումբ, արտահանում, ներմուծում, ցուցանիշ, մասնաբաժին, առևտրաշրջանառություն։

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2011թթ.՝ ըստ հիմնական ապրանքախմբերի

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) տվյալներով՝ 2011թ. ՀՀ արտաքին առևտուրը կազմել է $5.4 մլրդ, որի զգալի հատվածը՝ $4.1, բաժին է ընկել ներմուծմանը. արտահանման չափաբաժինը կազմել է $1.3 մլրդ։

2011թ. ՀՀ արտահանած $1.334 մլրդ ապրանքատեսակների գրեթե կեսը՝ շուրջ $607 մլն, բաժին էր ընկնում ԵՄ-ին։ ԵՄ երկրներից իրենց բարձր ցուցանիշներով առանձնացել են Գերմանիան և Բուլղարիան, որոնք համապատասխանաբար ՀՀ-ից ներմուծել են $158 և $152 մլն-ի ապրանքատեսակներ։ Հաջորդաբար բարձր են եղել նաև Նիդերլանդների ($117 մլն), ինչպես նաև Իսպանիայի ($83 մլն) համապատասխան արդյունքները։ ԵՄ արտահանման ցուցանիշին հաջորդում է *այլ երկրներ*[2] կատեգորիան. դեպի *այլ երկրներ* ՀՀ արտահանումը կազմել է $459 մլն, որտեղ բարձր ցուցանիշներով առանձնացել

[1] «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012-2013թթ.» տվյալները վերաբերում են համապատասխանաբար 2011-2012թթ. վիճակագրությանը։

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ։

[2] ՀՀ ԱՎԾ տեղեկատվությունում ՀՀ արտաքին առևտրի՝ ըստ երկրների հաշվարկի կատեգորիա։

են Իրանը՝ $106 մլն-ի ապրանքատեսակ, ԱՄՆ-ը՝ $101 մլն-ի: Համեմատաբար բարձր են եղել նաև Կանադայի ($70 մլն) և Վրաստանի ($62 մլն) արդյունքները: ԱՊՀ երկրներ արտահանվել է ընդհանուր առմամբ $268 մլն-ի ապրանքատեսակ, որի ճնշող հատվածը՝ $222 մլն, բաժին է ընկել ՌԴ-ին: 2011թ. ՀՀ-ն ներմուծել է $4.145 մլրդ-ի ապրանքատեսակ, որոնք գրեթե հավասարապես են բաշխվել՝ ըստ առանձնացված հիմնական կատեգորիաների: ԱՊՀ-ից ներմուծվել է $1.208 մլրդ-ի ապրանքատեսակ, ԵՄ-ից՝ $1.167 մլրդ-ի, իսկ *այլ երկրներ*-ից՝ $1.768 մլրդ-ի: ԱՊՀ-ից ներմուծված ապրանքատեսակների զգալի հատվածը բաժին է ընկնում ՌԴ-ին ($890 մլն), համեմատաբար բարձր է եղել նաև Ուկրաինայի ցուցանիշը՝ $232 մլն: ԵՄ-ից իրենց բարձր ցուցանիշներով առանձնացել են Գերմանիան ($245 մլն), Իտալիան ($170 մլն), ինչպես նաև Բուլղարիան ($102 մլն): *Այլ երկրներ* շարքում աչքի են ընկել Չինաստանը ($404 մլն), Թուրքիան ($240 մլն), Իրանը ($217 մլն) և ԱՄՆ-ը ($147 մլն):

Աղյուսակ 1

ՀՀ արտահանումն ու ներմուծումն ըստ երկրների կատեգորիաների, մլն $, 2011թ.

Երկրներ	Արտահանում	Ներմուծում
Ընդամենը	1334	4145
ԱՊՀ երկրներ	268	1208
որից՝ Ռուսաստան	222	891
Ոչ ԱՊՀ երկրներ	1066	2936
որից՝ ԵՄ երկրներ	607	1167
որից՝ Այլ երկրներ	459	1768

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

ՀՀ ընդհանուր արտահանման մեջ, ըստ ապրանքախմբերի, զգալի է հանքաքարի, խարամի և մոխրի ապրանքախմբի մասնաբաժինը՝ $287.4 մլն, որի ճնշող մասը՝ $287.3-ը, բաժին է ընկնում *այլ*

երկրներ-ին[1]: Հաջորդաբար բարձր է բնական կամ արհեստական մարգարտի, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների ապրանքախմբի տեսակարար կշիռը՝ $196 մլն, որի զգալի հատվածը՝ $167 մլն, կրկին բաժին է ընկել *այլ երկրներ*-ին: Հաջորդաբար հետևում է ոգելից և ոչ ոգելից ըմպելիք և քացախ ապրանքախումբը՝ $147 մլն: Այս ապրանքախմբի մեծ մասը՝ $121 մլն, արտահանվել է ԱՊՀ: 2011թ. արտահանվել են $134 մլն-ի սև մետաղներ, ինչը բաժին է ընկել միայն *այլ երկրներ*-ին: Բարձր է նաև պղնձի և դրանից պատրաստված իրերի ապրանքախմբի արտահանման մասնաբաժինը՝ $120.5 մլն, որը գրեթե ամբողջությամբ արտահանվել է *այլ երկրներ*: ՀՀ ներմուծման մեջ ամենաբարձր մասնաբաժինը կազմել է հանքային վառելանյութերի, նավթի ու նավթամթերքի, բիտումային միջոցների ապրանքախումբը՝ $806 մլն, որից $439 մլն ներմուծվել է ԱՊՀ-ից, իսկ $367 մլն՝ *այլ երկրներ*-ից: Հաջորդաբար բարձր է նաև միջուկային ռեակտորների, կաթսաների, սարքավորումների ապրանքախմբի բաժինը՝ $334 մլն, որի մեծ հատվածը՝ $298 մլն, բաժին է ընկել *այլ երկրներ*-ին: Վերջինիս իր բարձր ցուցանիշով հաջորդում է վերգետնյա տրանսպորտի միջոցների և դրանց մասերի ապրանքախումբը՝ $313 մլն, որի ճնշող մասը ($281 մլն) ներմուծվել է *այլ երկրներ*-ից: ՀՀ ներմուծման մեջ հաջորդաբար բարձր է եղել նաև էլեկտրական մեքենաների, սարքավորումների, ձայնագրող ապարատների ապրանքախմբի չափաբաժինը՝ $232 մլն, որի մեծ մասը ($207մլն) բաժին է ընկնում կրկին *այլ երկրներ*-ին:

ՀՀ ԱՎԾ-ն տվյալներ է ներկայացնում ՀՀ արտահանման ու ներմուծման մեջ ՀՀ հիմնական գործընկեր երկրների տեսակարար կշիռների վերաբերյալ: ՀՀ արտահանման մեջ համեմատաբար բարձր ցուցանիշներ են արձանագրել ՌԴ-ն ու Գերմանիան՝ համապատաս-

[1] ՀՀ ԱՎԾ տեղեկատվությունում ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունն ըստ ապրանքախմբերի ներկայացվում է, որպես կանոն, ԱՊՀ և այլ երկրներ կատեգորիաների դասակարգման միջոցով, ներկայացված չեն առանձին երկրները:

խանաբար 16.7 և 11.8%: Բուլղարիան զբաղեցնում է 3-րդ հորիզոնականը (11.4%): 4-6 դիրքերը զբաղեցրել են Նիդերլանդները, Իրանն ու ԱՄՆ-ը: ՀՀ ներմուծման մեջ1-2 դիրքերը զբաղեցնում են ՌԴ-ն ու Չինաստանը, որոնց հաջորդում են Գերմանիան ու Թուրքիան:

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2013թ. [1]

2012թ. ՀՀ ընդհանուր առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ $5.6 մլրդ, որի զգալի հատվածը՝ $4.2 մլրդ, բաժին էր ընկնում ներմուծմանը, իսկ արտահանումը կազմել է շուրջ $1.3 մլրդ: ԱՊՀ երկրներ արտահանվել է $336.6 մլն-ի, ներմուծվել՝ $1.334 մլրդ-ի ապրանքատեսակ: ԵՄ երկրներ արտահանվել են $511 մլն-ի ապրանքատեսակներ, ներմուծվել՝ $1.124 մլրդ-ի:

Գրաֆիկ 1

Ապրանքների արտահանումն ԱՊՀ և այլ երկրներ, %-ով՝ արտահանման ընդհանուր ծավալից, 2009-2012թթ.



Գրաֆիկը՝ ըստ ՀՀ ԱՎԾ Տարեգրքի

[1] ՀՀ ԱՎԾ Տարեգիրք 2013թ. տվյալները հիմնվում են 2012թ. վիճակագրության վրա:

Գրաֆիկ 2

Ապրանքների ներմուծումն ԱՊՀ և այլ երկրներից, %-ով՝ ներմուծման ընդհանուր ծավալից, 2009-2012թթ.



Գրաֆիկը՝ ըստ ՀՀ ԱՎԾ Տարեգրքի

ՀՀ արտահանման մեջ հիմնական գործընկեր երկրների տեսակարար կշռում անհամեմատ զգալի է ՌԴ ցուցանիշը՝ 20.2%: Այս ցուցակում 2-րդ հորիզոնականը զբաղեցնում է Բուլղարիան՝ 9.4%: Հաջորդաբար բարձր են նաև Բելգիայի և Իրանի արդյունքները: ՀՀ ներմուծման մեջ իր բարձր տեսակարար կշռով կրկին անհամեմատ զգալի է ՌԴ ցուցանիշը՝ 24.8%, որին հաջորդում են Չինաստանն (9.4%) ու Գերմանիան (6.2%) (*Աղյուսակ 2*):

Ըստ հիմնական ապրանքախմբերի հաշվարկի, 2012թ. ՀՀ ներմուծման մեջ անհամեմատ զգալի է հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք ապրանքախմբի չափաբաժինը՝ $902.4 մլն, որի մեծ մասը՝ $542.7 մլն-ի չափով, ներմուծվել է ԱՊՀ-ից, $359.7 մլն բաժին է ընկնում *այլ երկրներ*-ին: Հաջորդաբար մեծ է միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական հարմարանքներ ապրանքախումբը՝ $386.3 մլն, որի ճնշող մասը՝ $325.7 մլն, ընկել է *այլ երկրներ* կատեգորիային: Բարձր ցուցանիշ է արձանագրվել վերգետնյա տրանսպորտի միջոցներ և դրանց մասեր ապրանքախմբի պարագայում՝ $340.5 մլն, որի զգալի հատվածը՝ $304.5 մլն,

Աղյուսակ 2

Հիմնական գործընկեր երկրների տեսակարար կշիռը ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունում, %, 2012թ.

Հիմնական գործընկեր երկրների տեսակարար կշիռը ՀՀ արտահանման մեջ, %, 2012թ.		
	տեսակարար կշիռը, %	դիրքը
Ռուսաստան	20.2	1
Բուլղարիա	9.4	2
Բելգիա	9.2	3
Իրան	7.9	4
Գերմանիա	7.6	5
ԱՄՆ	6.3	6
Կանադա	6.2	7
Նիդերլանդներ	5.8	8
Հիմնական գործընկեր երկրների տեսակարար կշիռը ՀՀ ներմուծման մեջ, %, 2012թ.		
	տեսակարար կշիռը, %	դիրքը
Ռուսաստան	24.8	1
Չինաստան	9.4	2
Գերմանիա	6.2	3
Իրան	5.1	4
Ուկրաինա	5.1	5
Թուրքիա	5	6
Իտալիա	4	7
ԱՄՆ	3.4	8

Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

արձանագրվել է *այլ երկրներ*-ի դեպքում: Հաջորդ խոշոր քանակը եղել է էլեկտրական մեքենաներ, սարքավորումներ, ձայնագրող ապարատներ ապրանքախումբը՝ $215.6 մլն, որի զգալի հատվածը՝ $184.1 մլն, բաժին է ընկել *այլ երկրներ*-ին: ՀՀ արտահանման մեջ

Գրաֆիկ 3

ՀՀ ներմուծումն՝ ըստ հիմնական ապրանքախմբերի, $մլն, 2012թ.



Գրաֆիկ 4

ՀՀ արտահանումն՝ ըստ հիմնական ապրանքախմբերի, $մլն, 2012թ.



Գրաֆիկները կազմվել է ՀՀ ԱՎԾ Տարեգրքի վիճակագրական տվյալների հիման վրա

խոշորագույն մասնաբաժինը պատկանում է հանքաքար, խարամ և մոխիր ապրանքախմբին՝ $279 մլն: Վերջինիս հաջորդում է ոգելից և ոչ ոգելից ըմպելիք և քացախ ապրանքախումբը՝ $186 մլն: Հաջորդաբար զգալի է եղել նաև բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ ապրանքախմբի արտահանման չափաբաժինը՝ $173 մլն (*առավել մանրամասն տե՛ս Գրաֆիկ 3, 4-ում*):

ՀՀ Մաքսային ծառայություն. ՀՀ ընդհանուր առևտրաշրջանառությունը 2013թ. դրությամբ[1]

ՀՀ Մաքսային ծառայության (ՀՀ ՄԾ) տվյալներով՝ 2013թ. ՀՀ արտաքին առևտուրը հաշվվել է $5.967 մլրդ, որից արտահանումը կազմել է $1.4 մլրդ, ներմուծվել է $4.4 մլրդ-ի ապրանքատեսակ: Ըստ երկրների խմբերի հաշվարկի, ԱՊՀ տարածք արտահանումը կազմել է $396 մլն, որը զգալիորեն զիջում է ԵՄ արտահանման համապատասխան արդյունքին՝ $496 մլն: Բարձր ցուցանիշ է արձանագրվել նաև դեպի ասիական երկրներ ՀՀ արտահանման ոլորտում՝ շուրջ $363 մլն:

Գրաֆիկ 5

ՀՀ արտահանումն ըստ երկրների խմբերի, $մլն, 2013թ.



Աղբյուրը՝ ՀՀ Մաքսային ծառայություն, customs.am

[1] ՀՀ առևտրաշրջանառության 2013թ. վիճակագրությունը հիմնվում է ՀՀ ՄԾ տրամադրած տեղեկատվության վրա և վերաբերում է 2013թ. տվյալներին:

Ի տարբերություն արտահանման, ՀՀ ներմուծման մեջ անգերազանցելի է ԱՊՀ երկրների չափաբաժինը՝ $1.394 մլրդ, որին զիջում է ԵՄ համապատասխան արդյունքը՝ $1.161մլրդ: Բարձր է եղել նաև Ասիայից ներմուծումների արդյունքը՝ $1.359 մլրդ:

Գրաֆիկ 6

ՀՀ ներմուծումն ըստ երկրների խմբերի, $մլն, 2013թ.



Աղբյուրը՝ ՀՀ Մաքսային ծառայություն, customs.am

ՀՀ ՄԾ-ն տեղեկատվություն է տրամադրել նաև 2013թ. ՀՀ արտաքին առևտրի ապրանքային ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ: ՀՀ արտահանման մեջ հիմնական ապրանքախմբերից իր բարձր ցուցանիշով աչքի է ընկնում սննդեղեն, գյուղատնտեսական հումք ապրանքախումբը՝ կազմելով ՀՀ ընդհանուր արտահանման 28.1%-ը (2012թ.՝ 23.8%): Ընդ որում, այդ ցուցանիշի 14.5%-ը բաժին է ընկել ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներին: Այս ապրանքախմբին հաջորդում է հանքանյութեր ապրանքախումբը, որի ցուցանիշը հաշվվել է ՀՀ ընդհանուր արտահանման 27.3%-ը (2012թ.՝ 28.4%): Հանքանյութեր ապրանքախմբում վառելիքաէներգետիկ ապրանքների մասնաբաժինը կազմել է 5.7%: ՀՀ ընդհանուր արտահանման մեջ բարձր են եղել նաև մետաղներ և արտադրանք, ինչպես նաև թանկարժեք քարեր, մետաղներ ապրանքախմբերի

չափաբաժինները՝ համապատասխանաբար ՀՀ արտահանման 20.9 և 12.7%-ը: ՀՀ ներմուծման մեջ առաջատար է հանքանյութեր ապրանքախումբը՝ ընդհանուր ներմուծված ապրանքատեսակների 21.6%-ը, ինչը գրեթե ամբողջությամբ բաժին է ընկել վառելիքաէներգետիկ ապրանքներին՝ 21.3%: Հաջորդաբար բարձր է եղել մեքենաներ, սարքավորումներ, փոխադրամիջոցներ ապրանքախմբի չափաբաժինը՝ 20.9%: Նշյալ ապրանքախմբերին հաջորդում է սննդեղեն, գյուղատնտեսական հումք ապրանքախմբի արդյունքը՝ ընդհանուր ներմուծման 18.9%-ը:

Գրաֆիկ 9-ից կարելի է հստակ պատկերացում կազմել ՀՀ արտաքին առևտրի վերաբերյալ՝ ըստ հիմնական գործընկեր երկրների, որտեղ ներկայացված են ներմուծման և արտահանման վիճակագրության տվյալները միասին վերցրած: ՀՀ առաջատար գործընկեր երկրների ցուցակը գլխավորում է ՌԴ-ն, որի հետ ՀՀ առևտուրը 2013թ. դրությամբ հաշվվել է $1.453 մլրդ: ՌԴ-ին իրենց բարձր ցուցանիշներով հաջորդում են Չինաստանը ($454 մլն), Գերմանիան ($366 մլն) և Իրանը ($299 մլն): 5-րդ և 6-րդ դիրքերը զբաղեցրել են համապատասխանաբար Ուկրաինան և ԱՄՆ-ը: ՀՀ արտաքին առևտրի 10 հիմնական գործընկեր երկրների ցուցակի 8-րդ դիրքում է հայտնվել նաև հարևան Թուրքիան ($212 մլն):

Ապրիլ, 2014թ.

Գրաֆիկ 7

ՀՀ արտահանման ապրանքային ընդհանուր կառուցվածքը 2012-2013թթ., $ մլն



Աղբյուրը՝ ՀՀ Պետական գաղտնիության, customs.am

Գրաֆիկ 8

ՀՀ ներմուծման ապրանքային ընդհանուր կառուցվածքը 2012-2013թթ., $ մլն



Աղբյուրը՝ ՀՀ Մաքսային ծառայություն, customs.am

Գրաֆիկ 9

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության հիմնական գործընկերները (արտահանման և ներմուծման ցուցանիշները ներկայացված են միասին), $մլն, 2013թ.



Աղբյուրը՝ ՀՀ Մաքսային ծառայություն, customs.am

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ 2012-2013ԹԹ.

Կարեն Վերանյան

Ամփոփագիր

Հոդվածն անդրադառնում է Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության վիճակագրությանը 2012-2013թթ.: Վիճակագրական տվյալները վերաբերում են ինչպես ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ընդհանուր պատկերին, տարբեր տարածաշրջանների ու տնտեսական-քաղաքական կառույցների հետ հաստատված տնտեսական կապերին, այնպես էլ Հայաստանի արտաքին առևտրին՝ մեր երկրի հիմնական գործընկեր երկրների և հիմնական ապրանքախմբերի առանձնացմամբ:

ВНЕШНЕТОРГОВЫЙ ОБОРОТ РА 2012-2013ГГ.

Карен Веранян

Резюме

Статья затрагивает статистику внешнеторгового оборота РА за 2012-2013гг. Статистические данные касаются как общей картины внешнеторгового оборота РА, экономических связей, установленных с разными регионами и политико-экономическими структурами, так и внешней торговли Армении с основными странами-партнерами и с выделением основных категорий товаров.

FOREIGN TRADE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2012-2013

Karen Veranyan

Resume

The article explores foreign trade statistics of the RoA for 2012-2013. The reviewed statistical data concern the overall pattern of the RoA foreign trade, economic ties established with various regions and political/economic structures, and Armenia's trade with the key partner countries in terms of the main product categories.